ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-ԻՆ, ԺԱՄԸ 10.00-ԻՆ ՆՇԱՆԱԿՎԱԾ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՍԿՍԵԼՈՒ ՕՐԸ 25.05.2017Թ. ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՄԱՅԻՍԻ 23-ԻՆ, ԺԱՄԸ 10.00-ԻՆ ՆՇԱՆԱԿՎԱԾ ԳՈՐԾԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ՍԿՍԵԼՈՒ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ 25.05.2017Թ., ԺԱՄԸ 15.00 ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

Լրացուցիչ նյութերի ուսումնասիրման անհրաժեշտությունից ելնելով՝ «Միշա Պետրոսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ», «2016 թվականի նոյեմբերի 30-ին Մոսկվայում ստորագրված՝ «Ռուսաստանի Դաշնության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծման մասին» 2000 թվականի փետրվարի 11-ի համաձայնագրին Հայաստանի Հանրապետության կառավարության միանալու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ», «2016 թվականի նոյեմբերի 30-ին Մոսկվայում ստորագրված՝ «Ռուսաստանի Դաշնության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծման մասին» 2000 թվականի փետրվարի 11-ի համաձայնագրում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործերի դատաքննություններն սկսելու օրը նախկինում նշանակված 11.05.2017թ.-ից փոխադրել 25.05.2017թ., ժամը 10.00, իսկ «Ջուլետա Եսայանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1202-րդ հոդվածի, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի դատաքննությունն սկսելու օրը 23.05.2017թ., ժամը 10.00-ից փոխադրել 25.05.2017թ., ժամը 15.00:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

5 մայիսի 2017 թվականի
ՍԴԱՈ-32